ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19

Հեռ./ֆաքս՝ + 374 10 527400

27.03.2019 թ.

«ARMDAILY.AM» ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԻ
ԼՐԱԳՐՈՂ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի Արփինե Պետրոսյան

Ձեր առաջին հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն մեկնած ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակության կազմում եղել են ՀՀ ԱԺ պատգամավորներ Ռուբեն Ռուբինյանը, Լիլիթ Մակունցը, Էդմոն Մարուքյանը, Նաիրա Զոհրաբյանը, Ծովինար Վարդանյանը:

Պատվիրակությանն ուղեկցող կազմում են եղել ՀՀ ԱԺ նախագահի օգնական Վահան Կոստանյանը, ԱԺ աշխատակազմի արարողակարգի վարչության պետ Արտակ Հովհաննիսյանը եւ լրատվության ու հանրության հետ կապերի վարչության լուսանկարիչ Արաքսյա Քոչարյանը:

Ձեր երկրորդ հարցի առնչությամբ նշենք, որ այցն իրականացվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի նախագահի հրավերով եւ գիշերակացի ծախսերը կատարվել են հրավիրող կողմի հաշվին՝ բացառությամբ ՀՀ ԱԺ նախագահի օգնականից ու Լրատվության եւ հանրության հետ կապերի վարչության լուսանկարչից: Խորհրդարանական պատվիրակության ճանապարհածախսն ու օրապահիկը վճարվել է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Տեղեկացնենք, որ Ձեր երրորդ հարցի պատասխանը կարգավորվում է ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ:

4-րդ հարցի վերաբերյալ նշենք, որ պաշտոնական այցը տեղի է ունեցել մարտի 18-21-ը եւ հագեցած է եղել տարբեր հանդիպումներով:

Խորհրդարանական պատվիրակության հանդիպումներին հանգամանալի կարող եք ծանոթանալ << Ազգային ժողովի պաշտոնական կայքի (http://www.parliament.am) «Լուրեր» բաժնում:

Հարգանքով՝

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀՐԱՅՐ ՋՈՐՅԱՆ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ